Հաստատված է.
Գավառի պետական բժշկական քոլեջի
կառավարման խորհրդի նիստում՝
„28„ 04 2023 թ.
(արձանագրություն N 8)
Խորհրդի նախագահ՝ Գ. Սողոմոնյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

/Նոր խմբագրությամբ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՈՒսանողական Խորհուրդը, /այսուհետ ՈՒԽ/ ինքնակառավարման մարմին է , այն ստեղծվել է պաշտպանելու և ապահովելու ուսանողների իրավունքները, և հնարավորություն է տալիս ուսանողներին մասնակցելու իրենց վերաբերվող հարցերի քննարկմանն ու լուծմանը, սոցիալական գործունեության զարգացմանը՝ աջակցելով ուսանողական նախաձեռնությունների իրականացմանը::

1.2. ՈՒԽ-ն մշտական գործող և ուսանողների գործունեությունը համակարգող ներկայացուցչական մարմին է և գործում է սույն կանոնակարգի հիման վրա: Սույն կանոնակարգը քննարկվում է ՈՒԽ-ի կողմից և հաստատվում է Կառավարման խորհրդի որոշմամբ :

1.3 Իր գործունեությունը իրականացնելիս ՈՒԽ-ն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, Նախնական/արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով, Քոլեջի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

1.4. Քոլեջի յուրաքանչյուր ուսանող իրավունք ունի ընտրելու և ընտրվելու ուսանողական խորհրդում ' համաձայն սույն Կանոնակարգի: .

1.5. ՈՒԽ գործունեությունն ուղղված է քոլեջի բոլոր ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

1.6. ՈՒԽ որոշումները տարածվում են քոլեջի բոլոր ուսանողների վրա:

1.7. Աշխատանքները համակարգելու համար քոլեջի ՈՒԽը իրավասու է խորհրդ նիստերին որպս հրավիրյալներ ներգրավել նաև Քոլեջի վարչական և մանկավարժական կազմի, ինչպես նաև կառավարման խորհրդի ներկայացուցիչների:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

2.1. ՈՒԽ նպատակները՝

- ուսանողական ներուժի համախմբում ' ուսուցման գործընթացում առաջացող խնդիրները համատեղ լուծելու նպատակով,
- Քոլեջի կառավարման գործընթացում ուսանողների ակտիվ մասնակցության համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- քոլեջի ուսանողների նախասիրությունների և հետաքրքրությունների, նրանց ինքնաիրացման և ստեղծագործական ներուժի բացահայտումը;
- քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործում տնօրենին աջակցության ցուցաբերում,
- Քոլեջի կարիերայի պատասխանատուի հետ սերտ համագործակության ապահովում,
- Քոլեջի որակի ապահովման գործառույթների իրականացման գործում ներգրավվածության ապահովում:

2.2. ՈՒԽ խնդիրները:

- ուսանողների իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն;
- ուսանողների կրթական, և նրանց շահերին առնչվող այլ հարցերի լուծմանն աջակցության ցուցաբերում;
- ուսանողության շրջանում ժողովրդավարական ավանդույթների պահպանում և զարգացում, քոլեջի կրթական խնդիրների վեր հանում քննարկում և լուծումների առաջադրում, ուսանողների ժամանցի կազմակերպում, առողջ ապրելակերպի քարոզում, կրթական գործընթացի շրջանակներում աջակցության քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներին;
- ուսանողների կողմից ընտրած մասնագիտության նկատմանբ արժևորման խթանում,
- քոլեջի ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորում և տարածում;
- քոլեջի գործունեությանն և ուսանողների իրավունքներին առնչվող ներքին իրավական փաստաթղթերի և դրանց բովանդակության վերաբերյալ տեղեկատվության ապահովում;
- տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների ՈՒԽ-ների միջև փոխգործակցության կապերի հաստատում և ամրապնդել;
- հասարակական նշանակություն ունեցող երիտասարդական նախաձեռնություններին մասնակցության ապահովում:
- Քոլեջի կարիերայի պատասխանատուի հետ համագործակցություն,
- Քոլեջի կրթության որակի ապահովման պատասխանատու հետ համագործակցություն:

2.3. Ուսանողական խորհրդի գործունեության սկզբունքները՝

- ՈՒԽ աշխատանքների հրապարակայնության ապահովում;
- ՈՒԽ գործունեությանը կամավոր մասնակցություն;
- որոշումների կայացման հարցում կոլեգիալության ապահովում,
- ՈՒԽ գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության ն թափանցիկության ապահովում ;
- ուսանողների առջև պատասխանատվություն ստանձնում:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ուսանողական խորհրդի կառուցվածքը ներառում է ուսանողական խմբերը իրենց ավագների հետ:

3.2. Ուսումնական խմբի ավագը ընտրվում է խմբի ուսանողների ընդհանուր ժողովում ձայների մեծամասնությամբ: Առաջին ժողովը համակարգում է խմբի տարիքով ավագ ուսանողը, իսկ դրան հաջորդող ժողովները՝ արդեն ընտրված խմբի ավագը: Ուսանողական խմբի ժողովներն արձանագրվում են: Ժողովն իրավասու է առաջադրելու ավագի թեկնածություն:

Ավագների ընտրությունը անցկացվում է բաց քվեարկությամբ: Ավագի թենածություն առաջադրելու և ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն ուսումնական խմբի բոլոր ուսանողները:

3.3 Ուսանողական խմբի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված՝ եթե դրան մասնակցում են ուսանողական խմբի ուսանողների կեսից ավելին :

3.3. Քոլեջի ՈՒԽ-ի կազմի մեջ մտնում են. խորհրդի նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, անդամները:

3.3 . Ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունն անցկացվում է փակ գաղտնի քվեարկությամբ: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն քոլեջի բոլոր ուսանողները: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով մյուս թեկնածուների համեմատ հավաքել է առավելագույն ձայներ, հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև անցկացվում է նոր քվեարկություն: Հաղթող է համարվում առավելագույն ձայն հավաքած թեկնածուն:

3.4. Քոլեջի ուսանողական խորհրդի նախագահի թեկնածու կարող է առաջադրվել առկա ուսուցմամբ այն ուսանողը, ով հանդիսանում է ՈՒԽ անդամ:

3.5 ՈՒԽ փոխնախագահը և քարտուղարը ընտրվում են ՈՒԽ անդամներից բաց քվեարկությամբ:

3.6 ՈՒԽ-ն կարող է ունենալ անդամներ յուրաքանչյուր խմբի ուսանողական համակազմի ¼ չափով:

3.6 ՈՒԽ բարձրագույն մարմինը ՈՒԽ-ի ընդհանուր ժողովն է:

3.8. Քոլեջի ՈՒԽ-ն պլանավորում է խորհրդի գործունեության ընդհանուր ուղղությունները և կապ պահպանում Քոլեջի որակի ապահովման, կարիերայի կենտրոնների,Քոլեջի ստորաբաժանումների և հասարակայնության հետ:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԻ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

4.1. Քոլեջի կառավարման և ղեկավար մարմինների և ՈՒԽ փոխհարաբերությունները կարգավորվում են սույն Կանոնակարգով:

4.2. ՈՒԽ-ն համագործակցում է Քոլեջի կառավարման խորհրդի հետ ' համագործակցության և ինքնավարության սկզբունքների հիման վրա:

4.3 ՈՒԽ-ն Քոլեջի ուսանողների կազմից 3 թեկնածու առաջադրում է կառավարման խորհրդի կազմում Քոլեջի կանոնադրության, «Կառավարման խորհրդի կազմում ուսանողների թեկնածությունը առաջադրելու վերաբերյալ» ընթացակարգի և սույն կանոնակարգի համաձայն :

4.4 Քոլեջի կառավարման մարմինի անդամները կարող են մասնակցել ուսանողական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով: Ուսանողական խորհրդի առաջարկությունները քննարկվում են քոլեջի կառավարման խորհրդի կողմից:

4.5 ՈՒԽ նախագահը, որպես ուսանողների ներկայացուցիչ կարող է ընդգրկվել տնօրինական խորհրդի կազմում:

4.6 ՈՒԽ-ն փոխհամագործակցում է Քոլեջի կարիերայի կենտրոնի հետ օժանդակելով Կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումների և տարբեր նախաձեռնությունների կազմակերպմանը և իրականացմանը:

4.7 ՈՒԽ-ն փոխհամագործակցում է Քոլեջի որակի ապահովման կենտրոնի հետ մասնակցելով Կենտրոնի կողմից ուսանողների կարիքները վեր հանող և գնահատող գործընթացի իրականացմանը:

5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. ՈՒԽ_ն իրավունք ունի՝

- մասնակցել Քոլեջի ուսանողների շահերը արտահայտող և կարգավորող իրավական ակտերի մշակմանը և կատարելագործմանը,
- մասնակցել ուսումնական գործընթացի որակի գնահատմանը, պատրաստել և առաջարկություններ ներկայացնել կառավարման խորհրդի հաշվի առնելով ուսանողների մասնագիտական հետաքրքրությունները,
- առաջարկություն ներկայացնել ուսումնական մասին ուսումնական գործընթացի ժամանակացույցում փոփոխություն կատարելու վերաբերյալ,
- առաջարկություն ներկայացնել պրակտիկայի կազմակերպման, ուսանողների կյանքի և հանգստի կազմակերպման հարցեր վերաբերյալ;
- մասնակցել ուսանողների կարգապահական խախտումների հետ կապված հարցերի քննարկմանը:
-ներգրավվել ուսանողական խորհրդի գործունեությանը և քոլեջի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողների խրախուսման համակարգի մշակմանն ու իրականացմանը;
- քոլեջի կառավարման խորհրդից, տնօրենից և այլ ստորաբաժանման ղեկավարներից պահանջել և սահմանված կարգով ստանալ ուսանողական խորհրդի գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն;
- առաջարկություններ ներկայացնել քոլեջի նյութատեխնիկական բազայի և տարածքների օգտագործման հարցերի լուծման վերաբերյալ;
-սահմանված կարգով օգտվել իր գործունեությանն առընչվող տեղեկատվությունից;
- սահմանված կարգով վերադաս մարմիններում բողոքարկել ուսանողների շահերին առնչվող հրամաններն ու կարգադրությունները;
- ուսանողների իրավունքների և ազատությունների, ինչպես նաև ուսանողական խորհրդի իրավունքների խախտման և սահմանափակման դեպքերում ' քոլեջի կառավարման խորհրդինն տնօրենին առաջարկություն ներկայացնել խախտված իրավունքները վերականգնելու և մեղավոր անձանց նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու վերաբերյալ;
- օգտագործել բողոքի օրինական ձևերը' պաշտպանելու ուսանողների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ուսանողական խորհրդի իրավունքները;
- ուղղակիորեն մասնակցել քոլեջի գործունեության պլանավորմանը, անցկացմանը և վերլուծությանը;

- մասնակցել քոլեջում ստեղծվող խորհուրդների (հանձնաժողովների և այլն) աշխատանքներին:

5.2. ՈՒԽը պարտավոր է՝

- իրականացնել աշխատանքներ, որոնք ուղղված են ուսանողների հասարակական գիտակցության և գիտելիքը, կրթությունը արժևորելու գիտակցության բարձրացմանը,
- իրականացնել աշխատանքներ, որոնք ուղղված են քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսների նկատմամբ հոգատար վերաբերմունքի ցուցաբերմանը;
- օժանդակել Քոլեջում ակադեմիական ազնվության, կարգապահության և իրավակարգի պահպանմանը, ուսանողների քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, պարտականության և պատասխանատվության զգացողության ձևավորմանը;
- իրականացնել ուսանողների հետ աշխատանքներ քոլեջի կանոնադրության և ներքին կանոնակարգերի պահանջների կատարման ուղղությամբ;
- աջակցել քոլեջի ղեկավար մարմիններին կրթական գործընթացի կազմակերպման հարցերում;
- ժամանակին և սահմանված կարգով քննել ՈՒԽ-ին հասցեագրված ուսանողների բոլոր դիմումները;
- աշխատանքներն իրականացնել ուսանողական խորհրդի կանոնակարգին և ուսումնական տարվա գործունեության պլանին համապատասխան;
- աջակցել ուսանողների տարաբնույթ նախաձեռնություններին;
- ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը քոլեջի ղեկավար մարմինների առջև;

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. ՈՒԽ-ն իր կազմից ընտրում է Նախագահ և փոխնախագահ և քարտուղար:
6.2. ՈՒԽ-ն իր նիստերն անցկացնում է առնվազն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության: Ուսանողական խորհրդի նիստերը բաց են :
6.3. ՈՒԽ-ի նիստն իրավազոր է՝ եթե նիստին մասնակցում են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
6.4. ՈՒԽ-ի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների թվի ձայների մեծամասնությամբ:
6.5. ՈՒԽ-ի նախագահն ապահովում է խորհրդի նիստերի նախապատրաստումն ու անցկացումը, այդ թվում՝ խորհրդի անդամների հետ համաձայնեցմամբ, որոշում է նիստերի օրակարգը, նախագահում է և ապահովում դրանց արձանագրումը :
6.6 Փոխնախագահը իրականացնում է իրեն վերապահված լիազորությունները, ինչպես նաև Նախագահի բացակայության դեպքում կատարում է նրա պարտականությունները:
6.7. ՈՒԽ-ն իր գործունեության աշխատանքները կազմակերպելու, ինչպես նաև բնականոն գործունեությունն ապահովելու համար կարող է կազմել հանձնաժողովներ:

6.8. ՈՒԽ-ն հաստատում է հանձնաժողովների կազմը, նշանակում հանձնաժողովների նախագահներին, իսկ նրա ներկայացմամբ՝ հանձնաժողովների այլ աշխատակիցների: Հանձնաժողովների աշխատանքների իրականացման կարգը սահմանում և հաստատում է ՈՒԽ-Ն:

6.9. ՈՒԽ-ն ըստ անհրաժեշտության իրականացնում է խորհրդատվական գործառույթներ:

6.10. Քոլեջը կրում է ուսանողական խորհրդի գործունեության համար անհրաժեշտ ծախսերը:

6.11. ՈՒԽ-ի գործունեությունն ապահովելու համար քոլեջը անհատույց օգտագործման է տրամադրում տարածքներ (Աշխատասենյակներ), կապի միջոցներ, գրասենյակային սարքավորումներ և այլ անհրաժեշտ նյութեր, միջոցներ:

6.12. ՈՒԽ-ին տրամադրված գույքն ու միջոցները խստագույնս օգտագործվում են ըստ նշանակության:

6.13. ՈՒԽ-ն պահպանում է իր նիստերի արձանագրությունները՝ համաձայն քոլեջի փաստաթղթաշրջանառության կարգի:

6.14. Արձանագրությունները պահվում են ՈՒԽ գրասենյակում:

6.15. Գործավարության պատասխանատվությունը կրում են ուսանողական խորհրդի նախագահը և քարտուղարը: